ԹԵՄԱ 2 ԱՍԻԱ

ԴԱՍ 2.15. Հնդկաստան (հինդի լեզվով՝ Բհարաթ)

• • •

Երկրի լիակատար գաղութացումը 19-րդ դարում իրականացրեց Մեծ Բրիտանիան: Ավելի քան մեկ դար Հնդկաստանը Մեծ Բրիտանիայի խոշորագույն գաղութն էր: Անկախացավ 1947թ.,բայց կրոնական,քաղաքական,ազգային և այլ նկատառումներով բաժանվեց ժամանակակից Հնդկաստանի և Պակիստանի: Պակիստանն էլ հետագայում բաժանվեց ժամանակակից Պակիստանի և Բանգլադեշի:

• • •

Նավթի և գազի պաշարները կենտրոնացված են արևմտյան և արևելյան մերձափնյա ծանծաղուտներում, սակայն այն չի բավարարում երկրի պահանջարկը: Ուստի Հնդկաստանը մեծ քանակությամբ նավթ և բնական գազ ներմուծող երկիր է:

Հնդստան թերակղզու արևմտյան և արևելյան եզրով ձգվում են **Արևմտյան** և **Արևելյան Գաթեր** սանդուղքաձև լեռները,որոնց և օվկիանոսի միջև տարածվում են հեքիաթային ավազոտ **Կորոմանդելյան** և **Մալաբարյան** լողափերը:

• • •

Հնդկաստանը բնության հակադրությունների երկիր է.նրա արևմտյան, Ինդոսի ձախափնյա հատվածում է տարածվում երկրագնդի չորային շրջաններից մեկը՝ **Թար** արևադարձային անապատը,իսկ արևելքում՝ Ասսամ նահանգի **Շիլոնգ** լեռնազանգվածի հարևանությամբ էլ գտնվում երկրագնդի ամենախոնավ բնակավայրը՝ **Չերապունջին**, որտեղ տեղումների միջին տարեկան քանակը 12000մմ. է: Չերապունջին անվանում են նաև աշխարհի «խոնավության բևեռ»:

Հնդկաստանի արժեքավոր հարստություններից են բերրի վարելահողե-

ը, որոնք ընդարձակ տարածք են զբաղեցնում Ինդոս-Գանգեսյան դաշ-տավայրում և Դեկանի սարահարթում: Բարենպաստ հողակլիմայական պայմանները իրենց հերթին նպաստել են պատմականորեն ձևավորված մարգային հողագործության զարգացմանը, խտաբնակ և քաղաքակրթական օջախների ձևավորմանը:

• • •

Կենդանական աշխարհի տեսակային և քանակական հարուստ կազմի պահպանության նպատակով Հնդկաստանում խստացվել է բնապահպանա-կան օրենսդրությունը, ստեղծվել են հատուկ պահպանվող շատ տարածք-ներ՝ արգելավայրեր,ազգային պարկեր, արգելոցներ:

• • •

Պլատֆորմի կարծր բյուրեղային հիմքն էլ պայմանավորել է մետաղա-կան օգտակար հանածոների՝ քրոմիտ, տիտան, պղինձ, երկաթաքար, ման-գան, բոքսիտների հարուստ պաշարների առկայությունը: Երկրի հյուսիս-ար-ևելքում կան ածխի հարուստ պաշարներ: Ածխի, երկաթաքարի և մանգանի հարուստ պաշարների տարածական մոտիկությունը զարգացման կարևոր նախադրյալ է ծառայել ածխամետաղաձուլական հզոր համալիրի ձևավոր-ման համար:

• • •

Բայց ցամաքային սահմաններն անցնում են դժվարամատչելի լեռնային տարածքներով և երկրի տնտեսական կյանքում մեծ դեր չունեն: Սակայն որոշ սահմաններ միջազգային մակարդակով հստակեցված չեն: Խոսքը երկրի հյու-սիսում գտնվող **Ջամու** և **Քաշմիր** նահանգների մասին է, որոնց նկատմամբ տարածքային հավակնություններ ունի Պակիստանը: Դա է պատճառը, որ այստեղ հաճախակի են սահմանային ազգամիջյան բախումները:

• • •

Կարևոր է, որ մուսսոնային անձրևները տեղան մշակաբույսերի աճման՝ վեգետացիոն շրջանում: Հարկ է նշել,որ մուսսոնային առատ ու երկարատև անձրևներն առաջացնում են ջրհեղեղներ, իսկ ուշացման դեպքում՝ երաշտ: Նույնիսկ եղել են տարիներ, որ մի քանի տարի շարունակ մուսսոնային անձրևներ չեն թափվել և առաջացել է երաշտ ու սով: